Գործ թիվ ԵԴ2/0335/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

23.01.2024թ. *ք. Երևան*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով ԱՁ Արմեն Հակոբի Սեդրակյանի կողմից ներկայացված հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ

ԱՁ Արմեն Հակոբի Սեդրակյանը 17.01.2024թ. հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Ավշարի համայնքապետարանի իրավահաջորդ Արարատի համայնքապետարանի՝ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով ծառայության մատուցման գնման պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու վերաբերյալ 19.12.2023թ. թիվ 3287 ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

18.01.2024թ. հայցադիմումը հանձնվել է Դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

ԱՁ Արմեն Հակոբի Սեդրակյանի ընդդեմ Ավշարի համայնքապետարանի իրավահաջորդ Արարատի համայնքապետարանի՝ ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 ծածկագրով ծառայության մատուցման գնման պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու վերաբերյալ 19.12.2023թ. թիվ 3287 ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**